588. ԽԱՉՔԱՐ. գյուղ մտնող ճանապարհի եզրին: Օձունի սարահարթի վերջին կեռմանում, Դեբեդի ձորի հանդիպակաց բարձունքի վրա, կոթունի տակ Ադամի կիսանդրիով, պատվանդանի մրոտած երկրորդ աստիճանին, 6 տող.



Ի :ՈՃԳ: (1204) ԹՈՒԻՍ. ԵՍ ՄԵՏԱՐՍ ԿԱՆ-
ԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ԱՒԳՆՈՒԹ[ԵԱՄ] Բ ԵՂԲ[ԱՒ]
Ր ԻՄՈՅ ԽԱՂԲԱԿԱ : ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍԲ
ՆՇԱՆԻՍ՝ ԶՄԵՋ ԵՒ ԶՃՆՈՂԱՆ ՄԵՐ
[ՅԻՇԵ]ՆՁԻՔ Ի ՔՍ : ՈՐՔ ՅԻՇԷՔ՝ ՅԻՇԵԱԼ ԼԻՁ
[Ի]Ք Ի ՔՍ:

Ծանոթ. Խաչքարը երբեմն գրանցվում է Օձունի հուշարձանների թվում, սակայն այն Հագվի գյուղի սահմանում է, դարավանդից գյուղ տանող ճանապարհի եզրին:

Պրակի նախորդ կազմողները Մետար անձնանունը կարդացել են ԱՒՏԱՐ, որը Ս. Սաղումյանը ճշտել է (խմբ.):

589. ԽԱՉՔԱՐ. գյուղից 0,5կմ հյուսիս, հենած կոպտապատ մատուռի պատին, քիվին ու ճակատին, 5 տող.



ԵՍ .....Ք[ԱՐ]
ԱՄԵ, ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՍԱ-
[ՐԳ]ԻՍԻ ՅՈԳՈՒՆ ԵՒ ԻՄ ՃՆՈՂԱՑ-
Ն: ՈՎ ՃՈՒՆԴՐ ԱՃԵՔ՝ ՅԻՇԵ[ՑԵՔ Ի] ՔՍ:
ԱՄԷՆ:

Ծանոթ. Քիվի գրերն անմշակ են և ինչ-որ անորոշ գծապատկերներ են դիտվում: ***Քարամե*** վերսկանգնումը վստահություն չի ներշնչում: Կարևորը, սակայն, վերջին տողն է: Նման մի ձևակերպում այլուստ չի դիտված. ***ով ծունդր ածեք*** ասելով նկատի է առնում՝ խաչքարի առաջ ով խոնարհվի, ծնկի գա, ծնրադրի, աղոթք մրմնջա:

Օ Ձ Ո Ւ Ն

Օձունը Հայաստանի առավել աչքի ընկնող պատմական բնակավայրերից է:

Բնակչությանն ստվարությամբ, փայտե պատշգամբով քարակերտ կրկնահարկ տներով, պարապմունքի բազմազանությամբ, կենցաղի, տարազի, հոգևոր-մշակութային բնութագրով գողտրիկ քաղաք հիշեցնող այս բնակավայրը հին պատմություն ունի: Դեռևս Վարդան Արևելցին այն կոչում է ***ավան,*** իսկ Չալալյանցը՝ ***«գիւղաքաղաք ի Տաշրաց աշխարհի»:*** Եվ եթե անունն ասերսվում է սողունի հետ, ապա դա մարդկային մտքի ծալքերում անքննին շողարձակող օձապաշտության կամ երկնային ընծրռնումների արձագանք է:

Օձունի հանբավն անկասելիորեն բարձրացավ վաղ միջնադարում, երբ այստեղ կառուցվեցին քրիստոնեական ճարտարապետության որոնող միտքն առաջ մղող հոգևոր շենքեր, և երբ հրապարակ եկավ հայոց մեծերից մեկը՝ գիտնական, իմաստասեր, իրավաբան, դիվանագետ, հետևողական միաբնակ Հովհան Հայրապետը: Նրա հրաշագործությունների մասին լեգենդներ են հյուսվել, նա դասվել է սրբերի շարքը, ոգեկոչել է ժամանակակիցներին ու հետագա սերունդներին 1300 տարի շարունակ: Միջնադարի

հեղինակավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու գնահատմամբ՝ «Յովհաննես Օձնեցի ... էր այր իմաստասէր և սուրբ, և վայելուչ հասակաւ մարմնոյն, և հոգւովն ևս առաւել գեղեցիկ» (էջ 67): Դավիթ Բաղիշեցու «Ժամանակագրության» մեջ նա որակվում է «այր հանճարեղ և իմաստուն»: Նա հարգանք էր վայելում արաբական իշխանապետության վերին աստիճանում և կարողացավ Հեշիմից գիջումներ կորզել ժողովրդի ինքնավարության, կրոնական ազատության, իրավական պաշտպանվածության հարցերում:

Օձունը հարուստ է ինչպես վաղ, այնպես էլ զարգացած միջնադարյան հուշարձաններով:

Ծաղկավանք եկեղեցի. կոչվում է նաև Ծիրանավոր: Ըստ ժողովրդական հավատամքի, ամոքում էր անցյալում լայն տարածում ունեցող մանկական ծաղիկ հիվանդությունը: Այս անվանք շատ սրբատեղիներ (և վերքերը դարմանող ուխտատեղիներ) կան Հայաստանում: Ծիրանավոր անվանումն առնչվում է ծիրանագեղեցիկ երկնային բագուհու՝ Սարիանի պաշտամունքին, որը նույնպես մանկանց սատարիչն է:

Հուշարձանը գտնվում է գյուղի արևելյան եզրում, լեռնապռունկին: Եկեղեցին միանավ փոքր սրահ է՝ ընդգծված պայտաձև խորանով: Հյուսիսային լանջի միասնաբար կառուցված այունասրահը հայտնի է սուրբ Կիրակի մատուռ անվամբ: Շինությունը կիսավեր է, թաղերն ու պատերի զգալի մասերը՝ իսպառ քանդված:

Ծաղկավանքը Դ-Ե դդ. գործ է և, Գ. Շախկյանի կարծիքով, ներազդել է Օձունի տաճարի հատակագծային կերպարի ձևաստեղծմանն ու մի շարք մանրամասներին:[53]

Մասնագիտական գրականության մեջ այս և նման սրահները թվագրվում են Ե դարով: Հետազոտողներից Ալ. Մանուչարյանը քննարկելով շինարարական, պատմական վավերագրերը, ճարտարապետական ձևերի ու հորինվածքի կազմավորման ընթացքը, եկել է այն համոզման, որ մեկ կամ երկկողմ ավանդատներով թաղածածկ սրահները Դ դարից ավելի ուշ կառուցված լինել չեն կարող:[54] Թեև վարկածը լրացուցիչ հիմնավորման հարկ ունի:[55]

Ուշ շրջանի նորոգումների ընթացքում եկեղեցու որմածքի մեջ է դրվել Ե-Զ դդ. քառակող կոթողի մի բեկոր՝ Հիսուսը գրկին Աստվածամոր պատկերաքանդակով:

Օձունի Ծաղկավանք-Ծիրանավոր[56] եկեղեցու հողմահար պատերին արձանագրություններ չեն պահպանվել:

Օձունի տաճար. Քրիստոնեական ճարտարապետության անուրանալի նվաճումներից է Օձունի տաճարը: Աղոթատունը անվանակոչված չէ որևէ սրբի անունով: Վիմագրերում հորջորջվում է *եկեղեցի* և *սուրբ եկեղեցի* կոչումներով: Հետազոտողների մոտ հաճախ կոչվում է սուրբ Հովհաննես՝ կարծատեսորեն վերագրելով Հովհան Օձնեցուն, անտեսելով, որ այս դեպքում անգամ այն պետք է վերաբերեր ոչ թե կաթողիկոսին կամ հա-

---

[53] *Գ. Շախկյան.* Նույն, էջ 53:

[54] *Ալ. Մանուչարյան.* Բնություն Հայաստանի IV-XI դդ. շինարարական վկայագրերի, Եր., 1977, էջ 16-25:

[55] Ճարտարապետության դոկտոր Սուրադ Հասրաթյանը վերջերս հրատարակված ծանրակշիռ աշխատության մեջ Օձունի Ծիրանավոր, Գյուլագարակի Տորմակադուռ, Կուրթանի Ս. Գրիգոր, Գյուլագարակի Ս. Աստվածածին, Արջովիտի Ս. Գրիգոր եկեղեցիները թվագրում է Զ դարով (*Мурад Асратян*, Армянская архитектура раннего христианства, М., 2000):

[56] Վերջերս հրատարակված ուշագրավ մի հոդվածում փորձ է արվում եկեղեցիների անունները վերապահել ավետարանիչներին. Մատթեոս՝ ծիրանագույն, Ղուկաս՝ սպիտակագույն, Մարկոս՝ կարմրագույն, Հովհաննես՝ կանաչագույն (Գրիգոր Նալբանդյան, Աշտարակի եկեղեցիների անվանումների խորհրդանշանների հարցի շուրջ, տես «Հայոց սրբերը և սրբավայրերը» Եր., 2001, էջ 192-199):

մանուն ավետարանչին, այլ Հովհաննես Մկրտչին՝ ինչը սովորական է մեզանում: Տաճարի մասին առաջինը ակնարկող Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ քաղկեդոնականության դեմ բուռն պայքար ծավալող սուրբ հայրապետը «Շինէ և եկեղեցի մեծ ի գիւղն Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լոռէ»:[57] Զալալյանցի մոտ եկեղեցին կրում է «Խաչգունդ» անուն՝ կառուցված «ի Յոհաննէս իմաստասեր կաթողիկոսէ Ի թուին Հայոց ՃՀԴ (735)», որը բացահայտ թյուրիմացություն է,[58] իսկ Օձնեցին մահացած էր դրանից տարիներ առաջ (728 թվին): Այն սխալմամբ կոչել են նաև Ս. Նշան: Տաճարի հին արձանագրությունները քննարկող գիտնականների առաջ ծառացել է նաև Թեոդորոս (Թեւոդորոս) անվանումը, սակայն այն հեռու է վերջնավճիռ լինելուց: Այնպես որ տակավին պետք է պահպանել ընդհանրացած *Օձունի տաճար* անվանումը: Տաճարի կառուցման ժամանակի վերաբերյալ տարբեր հուշերներ շարունակ մղվել են գիտական բանավեճեր: Ելակետային արժեք հետապնդող այս կառույցը Թ. Թորամանյանն ու Ն. Տոկարսկին դասում են Ե-Զ դդ. հորինվածքների շարքը: Վրացական քահ (Ամիրանաշվիլի, Չուբինաշվիլի) միտումնավոր ու հակագիտական տեսակետները հերքվել են վաղուց: Հուշարձանի պատմաբանասիրական քննությունը, ճարտարապետական ձևերի ու առանձնահատկությունների հանգամանալից վերլուծությունը կատարված է Գ. Շախկյանի մենագրություններում («Օձուն», «Լոռի»), ուր, հեղինակի եզրահանգման համաձայն, տաճարը կառուցվել է Զ դարի վերջին տասնամյակում՝ հետագայում կրելով մի շարք ակնառու միջամտություններ, այդ թվում՝ Հովհան Օձնեցու ժամանակ:

Օձունի տաճարը գտնվում է գյուղի կենտրոնում, իսկ անցյալում եղել է արևմտյան եզրում: Այն սահմանամատ ավելի բարդ շինություն է, տարբեր ժամանակների վերաշինության հետքերով: Տիպային բնութագրով գմբեթավոր բազիլիկ է, սակայն, ի տարբերություն Ե-է դարերում գմբեթավորված այլ բազիլիկների, այստեղ պահպանվել է հնից եկող սյուների նաև երրորդ զույգը, որը, սովորաբար, արվում է շենքի ընդհանուր համաչափությունների հավասարակշռման նպատակով: Միաժամանակ եկեղեցին երեք կողմերից ներառնված է արտաքին սյունասրահով, որպիսիք Հայաստանում վերանում են Զ դարի ավարտից:

Գ. Շախկյանը գտնում է, որ արտաքին սյունասրահն «իր հենարանային և ծածկի կոնստրուկցիաներով բուն եկեղեցուն ժամանակակից չէ, այլ հետագա վերակառուցման արդյունք» է,[59] այստեղից կարելի է հետևել, որ եկեղեցին առաջին վերակառուցման ենթարկվել է բավականին վաղ: Սակայն հնագույն այդ հատկանիշներին զուգընթաց, եկեղեցու գմբեթն իր կառուցվածքային ձևերով ակնհայտորեն է դարից վաղ լինել չի կարող: Հետևաբար, Գանձակեցու տեղեկությունը կարելի է միայն վերակառուցման իմաստով հասկանալ, որով և կբացատրվեն համեմատաբար ուշ շրջանին բնորոշ գմբեթաշինության ձևերը:

Վիմական վավերագրերի մեջ հնագրությամբ աչքի են ընկնում արևելյան պատի մեծատառ, նույն պատի վերնամասում շղագիր և հարավային մուտքի բարավորի արձանագրությունները: Առաջինը գրված է բարդ կցագրերով, որոնք թեև բազմիցս հրավիրել են ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն համոզիչ ու վերջնական ընթերցման վարկած դեռևս չի առաջարկվել:

---

[57] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 70:
[58] Հնարովի Խաչգունդ անունն ու 735 թ. ընդունել են նաև Լալայանը (էջ 375) և այլք:
[59] *Գ. Շախկյան*, Օձուն, Եր., 1983, էջ 12:

Մեմորիալ կոթողներ. Օձունում պահպանվում են տարածև մեմորիալ հուշարձաններ՝ կոթողներ, խաչքարեր, տապանաքարեր, որոնց մի մասը՝ Զ-ԺԷդդ. արձանագրություններով խաչքարերը տեղական դպրոցի արդյունք են, առանց պաճուճանքի, գուսպ և համաչափ հորինվածքով: Բառակող կոթողների մնացորդներ կան Ծաղկավանքի, Օձունի տաճարի որմածքում՝ ըստ երևույթին կորստից փրկելու նպատակով ագուցված պատերի մեջ, որոնք, թեև աղճատված, բայց արվեստի նշանակալի գործեր են: Այդ խմբում, սակայն, ամենահաչակվածը *Օձունի կոթողն* է: Սա եզակի հուշարձան է թե՛ ճարտարապետությամբ և թե գարմանահրաշ արվեստով, կերպարների բազմազանությամբ, տարազի ճոխությամբ, մարդկային կերպարի վերարտադրությամբ, երկրաչափական ու բուսական զարդամոտիվներով: Երկու կոթողների 8 նիստերից 2-ին լուսապատկերներով ու խաչաբարձ գավազաններով սրբապատկերներ են, 2-ին՝ շքեղ տարազով բարձրաստիճան ազնվականներ, 2-ին՝ բուսազարդեր (խաղողի որթ և զանգակածաղիկ՝ դրախտ և ավետում), հաջորդ երկուսում օղաշրջանակով և կիսաշրջան երկրաչափական զարդեր են՝ բոլորն էլ երկնած շքեղ արվեստով, մանրանկարային ու ոսկերչական կատարելությամբ: Պատկերների զգալի մասը հողմահարված-ոչնչացված են, և անկարելի է պատկերացնել սյուժետային ամբողջականությունը: Մասնագետների կարծիքով (Գ. Հովսեփյան, Բ. Առաքելյան, Լ. Ազարյան), ներկայացված է բարձրաստիճան իշխանական դասի քրիստոնեական դարձի պատմությունը:

Կոթողը տեղադրված է տաճարի հյուսիսային կողմում. քառանիստ երկու սյուները ներփակված են երեք որմնասյուներով, արևմտյան ճակատից դեպի կոթողներն են տանում նեղ ու բարձր 7 աստիճաններ՝ հիշեցնելով Գառնիի տաճարի սանդուղքները: Կոթողները վերևից փակվում են որմնագոտիով, որի վրա ճառագել են թևավոր խաչեր:[60] Ավանդաբար վերագրվում է Սմբատ Բագրատունի թագավորին,[61] բայց տաճարի ժամանակակիցն է. Զ դարից:

ՀՈՌՈՄԱՅՐԻ ՎԱՆՔ

Համակառույցը բաղկացած է երկու խմբից՝ Ներքին և Վերին:

Վերինը գյուղի հարավարևելյան կողմում է, դարավանդի հարթակի եզրում, Ներքինը՝ նույն ուղղությամբ ժայռի տակ, Դեբեդի ձախ ափի զառիվայրի վերջում: Ու թեև տեղադրությամբ առանձին են, բայց իրապես եղել է միասնական հոգևոր-մշակութային կենտրոն, ղեկավարվել է մեկ վանահոր կողմից: Իսկ դրանց թիվը, որոնց մասին վիմագրական և մատենագրական թեկուզ չնչին տեղեկություններ են հասել մեզ Ը դարից մինչև 1658 թիվը՝ պատկառելի է: Այսպիսին է Հոռոմայրի վանքի առաջնորդների տարեգրությունը.

1. Դավիր վարդապետ Հոռոմայրեցի – Ը դար
2. Քրիստափոր կրոնավոր – 1182 թ.
3. Հայր Սամուել Ա – 1201-1206 թթ.
4. Հայր Վարդան (ընդհատումներով) – 1245-1274 թթ.

---

[60] Խաչքարի մի թևը գտնվում է ՀՊՊԹ՝ *Մարկոս* մակագրությամբ (Գ. Շախկյան. Օձուն. 47):

[61] Զրույցը հոլովվելով՝ հասել է մեր օրերը, թե իբր հուշարձանի հովանու ներքով ամփոփված է 914 թ. Դվինում նահատակված Սմբատ արքան, որը (ինչպես և նրա անարգված դիակը հողին հանձնող կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին) արաբների հետապնդումներից խույս տալով, երբեմն այստեղ բնակվում էր Օձունում: